

1550


L. VIII 5

104

108







ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՅՂ. 6

ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

8 ՅՈՒՆԻՍ 1901

ԳԻԻ 1

ՓԻԻՆԻԿԻ ԸՆԴՀԱՏՄԱՆ

Ա Ռ Թ Ի Ի

Մէկ ու կէս տարուան ընդհատումէ մը յետոյ, երբ կ'սկսինք Փիւնիկի Բ. տարին, չ'ենք կրնար լուծեամբ անցնիլ այն դէպքերուն վրայ, որոնք այդ շրջանին տեղի ունեցան թէ՛ հոս և թէ՛ Արտասահման։ Մեր ընթերցողները գիտեն արդէն թէ՛ Փիւնիկի դադարումը, տպարանին փակման հետեւանքն էր։ Այնուհետև դատական և ուրիշ նիւթական գծուարութիւններ ուշացուցին անոր վերերևումը, մինչև որ, Գահիրէէն Աղեքսանդրիա փոխադրուած, յաջողեցանք քաղաքիս Հայկական «Արաքս» տպարանին մէջ վերսկրծել նոյնին հրատարակութիւնը։

Արտասահմանի հայութեան համար այդ շրջանի լաւագոյն և կարևորագոյն դէպքն եղաւ «Բրո Արմէնիա»ի երևումը։ Այդ թերթը, Հայաստանի համար հիմնուած, Ա. թիւէն սկսեալ ապացոյցը տուաւ զրկեալներու գատին գիտակցութեանը ոչ մի թերթ, — հաշուելով նոյն իսկ հայ յեղափոխական օրկանները — չ'է մատուցած մեր հայրենիքին այն ծառայութիւնները, զոր «Բրո Արմէնիա»ն չը դադրիր ընելէ, անզգայ ու չահամուլ Եւրոպայի աչքին

Հայրենիքէն յաջորդաբար հասնող ապեխարչ տեղեկագիրները, արցունքով դրուած նամակները, սպաննութեանց ու թալանի մանրամասնութիւնները, և այլն։ Հայերուս վրայ այնքան աւելի կը ծանրանայ երախտագիտութեան պարտքը հանդէպ այդ թերթի խրմբադրական մարմնին, որքան քիչ կը ըլլան մեղմով, մեր ցեղով, մեր դատով ու մեր հայրենիքով, այն հայ թերթերը, որոնցմէ ուրիշ բաներ կը սպասէինք, փոխանակ անհատական անպէտ ու անհամբըքտումներու, որոնք դժբաղդաբար, գաղափարի պայքարի համար չ'են, այլ ծաղրելիօրէն գծուծ ետամոլութեան ու յաւակնոտութեան սև գրոշմը կը կրեն։

Միւս կարևոր դէպքն է Մխիթարեան պատկառելի միաբանութեան հիմնարկութեան Բ. Գարադարձը, որ պիտի հանդիսաւոր կերպով կատարուի յաւաքիկայ Սեպտեմբերին, բովանդակ հայութեան սրտին հետ կը խօսի, ազգային լեզուին ու գրականութեան տօնն է անի, որուն ո՛րքան աւելի փայլ ու շքեղութիւն տրուի, այնքան աւելի բարձրացուցած կ'ըլլանք հայութեան փառքը, ինչպէս նաև հաստատած կ'ըլլանք թէ՛ անմահ Մխիթարի գործին խորունկ ու ճշմարիտ ըմբռնումն ունինք։

Նոյն ընդհատման շրջանին էր որ

նալու պէտքը, երկու հայ յեղափոխական կուսակցութեանց միջև ծագած տարադէպ վէճի մ'առթիւ, Արփիարեանը դատաստանի ենթարկելու, և անոր անպարտութիւնը կամ դատապարտութիւնը վճռելու նպատակով, մնացեալը գիտեն ընթերցողները, և մեր նպատակէն դուրս է այդ դէպքին վերլուծումը: Վերջերս կ'իմանանք թէ՛ Արփիարեան քաջուած է Նոր Կեանքի խմբագրութենէն, և թերևս, իր պատկանած կուսակցութենէն ալ: (ինչպէս որ Եգիպտոսի համար նոր ներկայացուցիչ կարգուած է Պ. Զարեհ Գոչեան, յաջորդելով Պ. Լեոն Մկրտիչեանի, որ մենչև վերջերս կը վարէր այդ պաշտօնը):

Սակայն ժողովուրդ մը, որ իր ցաւերովը կը տապկուի, ու օտարներու աստիճանականութեան մէջ կը քաշկուտէ իր ողորմելի էութիւնը, այդպիսի մասնակի փոփոխութեան մէջ ու պիտի հաշտուի յեղափոխական կուսակցութեանց հետ. անի արդէն իր բնագոյնն ու գէպքերուն ուժովը դարձած է յեղափոխական, կը սիրէ սկզբունքը, դադարփարը, ամեն ընկերութեան, որ իրեն նպատակ ընտրած է ժողովրդին կացութեան բարւոքումը. կը մնայ ուրեմն յեղափոխական կուսակցութեանց, աւելի և աւելի բարձրէն գիտել իշխող, հրաժարիլ աղանդամոլներու յատուկ ջղատութիւններէ, որպէս չի հետզհետէ գիւրացուցած ըլլան մերձեցումն և ի վերջոյ միացումի փրկարար գործը:

Կուսակցութիւնները միշտ օգտակար եղած են ու կրնան ըլլալ, եթէ սկզբունքի ու գաղափարի տարբերութեանց վրայ հիմնուած են անոնք. բայց, լոկ անձնական նկատումներու և սեզմ'ըմբռնումներու կամ կանխակալ կարծիքներու խախտում հիմքին վրայ գրուած կուսակցութիւնները վնասաբեր են յաւետ:

Անցեալի դառն փորձառութենէն օգտուած, կուգանք հիմայ խմբագրութեան հետեւելիք ուղին նշանակել: Ի-

սաւորութեան սատարող միջոցներէն ապահովներն ու լաւագոյնները կ'ըլլան, եթէ չը փորձուին ծախուելու այս կամ այն ալիքցութեան, և եթէ միշտ ջատագով ըլլան ճշմարտութեան ու արդարութեան: Սակայն ի՞նչ ըրած կ'ըլլայ ինքզնուկ խմբագիր մը, նիւթական սեղմումներու մէջ, եթէ հրապարակէ աղբային կամ հանրային զեղծում մը, սխալ մը, կամ եթէ քննադատէ մարմնոյ մ'արարքը. նախ՝ խուլ հակառակութիւն մը, որ տակաւ հալածումի հանգամանք կ'ստանայ, յետոյ խմբագրին անկումը, նոյն իսկ ժողովրդին աչքէն, որուն շահերը պաշտպանելու հա՛ար միայն նուիրուած էր անի հրապարակագրութեան: Հետեւաբար, փափաքելի է որ տեղական աղբային վարչութեան արարքները, վարժարանի կացութիւնը, ընկերութեանց գործունէութիւնները, ևն, քննադատուելէ առաջ, ուրիշ աւելի խոհեմ ու գործնական միջոցներու արժեքի նախընտրութիւն և երբ ու է ուրիշ միջոց սպառած է, այն ատեն միայն դիմել թերթին:

Զպատկանելով որ և է խումբի, անկողմնակալ թերթի մը բոլոր հանգամանքովը, պիտի հիւրընկալենք ամեն յօդուածներ, թղթակցութիւններ որոնք գրականութեան վրայ փայլ մը, աղբային և քաղաքական գործերու վրայ լոյս մը կը սփռեն: Պարկեշտութիւնը կը վայելենք արդէն, բայց ո՛րչափ աւելի գոհ պիտի մնանք, եթէ Արտասահմանի մէն մի հայաբնակ կեդրոնէ, թղթակից մը հաճի իր դաղթավայրէն տեղեկութիւններ հաղորդել, և այս կերպով գաղափարներու շփում և զգացումներու ինամութիւն առաջ բերել մեր միջև:

Փիւնիկը շաբաթաթերթի վերածեցինք, լուրերու աւելի ճոխ պաշար մը տալու համար մեր ընթերցողներուն, որոնց մէկ մասը, պէտք է խոստովանիլ, երկայն գրութիւններու կը գերադատէ կարճ լուրերը. մինչդեռ միւ-

նել թերթին ճակատը, ինչ որ բանաւոր է. բայց ՚ի խմբագրականէ, գրական գեղեցիկ կտորներ, արձակ թէ ոտանաւոր, պիտի պարունակէ Փիւնիկը. մասնաւոր էջեր կը յատկացնենք ազգ. քրոնիկին ու տեղական լուրերուն, նաև քաղաքական այժմէութեան, բնականաբար նախընտրելով եւրոպական հրատարակութիւններէն անոնք որ հայկական հարցին վրայ որ և է բան կը գրեն: Վ. երջապէս, ինչ որ շահեկան է ու օգտակար, պիտի ջանանք հետզհետէ մեր ծրագրին մէջ մտցնելու:

Քանի մը բառ ալ Փիւնիկի նպատակին և ուղղութեան վրայ, ու վերջացնենք: Նոյն է նպատակն և ամփոփոխ՝ ուղղութիւնը. Փիւնիկի Ա. տարուան Ա. թիւով հրատարակուած է ան, զոր կ'արտագրենք բառ առ բառ:

Ներմուծել առողջ գաղափարներ ընկերութեան փառք՝ ըղբղներուն մէջ, բարձր պահելու ջանալ բարոյական ու մտաւորական մակարդակը մեր ցեղին, որ նիւթապէս քանդուելէ ետք՝ քիչ մ'ատեն հանգչեցնելու պէտք ունի մեծ ազէտքէն զարնուած գլուխն ու ցընցուած ըղբղը. վառ պահել միշտ Մեծ զգացումը, Մայր - Հայրենիքի վերակենդանացման օրինաւոր յոյսը, հայ գաղթականութեան սրտին մէջ, որ տակաւ ուրիշ նոր ու օտար համակրութիւններէ կը փորձուի: Այդ ցրուած, վհատ ու ջախջախ բեկորները հայութեան, բերել մօտեցնել իրարու, նորոյժ մը կազմել, գաղափարներու հօսանք մը խաղացնել անոր մէջ, և ազատասիրութեան ձգտումները բանավարութեան հետ հաշտեցնել. իրական շահերը պաշտպանել հանրութեան, անհասանքը վարժեցնել կամքի, կորովի և ձեռներեցութեան. ահա՛ մեր նպատակը:

Օտար միջավայրերու մէջ պատկառելի դիրք մը դրաւող ազգակիցներու դունդ մ'ունինք, որոնց անընդհատ շփումի պէտքն աւելի քան երբէք կը

ծերուն, ինչ որ կը պակսի դժբաղբաւ մեր տենդոտ գործունէութեանց մէջ ալ, անխուսափելի պայմանն է մեր նպատակի յաջողութեան: Ժողովուրդը, մանաւանդ մերը, ճերմակ թերթիկ մ'է թղթի, նոյնութեամբ կ'ընդունի սև նշանագրերը. վա՛յ ուրեմն այն հրապարակագիրներուն, որոնք իրենց արհեստ ըրած են շահագործել ժողովրդի այդ տկարութիւնը:


Անկախ խմբագրութիւն մը, զերծ անձնական փոքրութիւններէ և կուսակցային կիրքերէ ու ծաղրելի ընդհարումներէ. անաչառ քննադատի աչքով, ոչ թէ զաչացու աղանդամոլի մը յամառութեամբ, դիտել իրերն ու դատել ազգային շարժումները. բողբե՛լ հաստատուած զեղծումներու դէմ: Ժողովուրդը կեղեքողը, անոր եռանդն ու միամտութիւնը շահագործողը, ըլլայ ռամիկ, ըլլայ տոհմիկ, դիմակաղերծ ընել. ահա՛ Փիւնիկի նշանաբանն և ուղղութիւնը:

Խ.


Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Փիւնիկը կ'ստանան մեր բաժանորդներէն անոնք որ Ա. տարուան ամբողջ տարեկան բաժնեգիրն վճարած են կանխիկ, և իրաւունք ունին ստանալու նաև 10 թիւեր: Փիւնիկ պիտի զրկենք նաև անոնց, որ Ա. տարուան 14 թիւերն սաացած են ամբողջովին առանց մերժելու, և մեզ իրաւունք կուտան բաժանորդ նկատելու զիրենք: Իսկ անոնք որ կը փափաքին նոր բաժանորդագրուիլ, կրնան դիմել, Մէնչիյէ, Հայկ. Մեծ Սրճարանը, ուր կը գտնուի խմբագիր Տնօրէնը, ամեն օր, կէս օրէն ետքը ժամը 4էն մինչև 6 առ այժմ:


ՀԱՅՈՒՆ ՃԻՉԸ



Ա՛խ, ո՞ր ցեղն է այն որ Հայուն չափ կրեց վե՛րք.
Ո՞ր երկիր պարգեց այսօր անհուն աւե՛րք.
Ո՞ր հայրերը կրտսկեցին որբեր ա՛յսօր.
Ո՞ր մայրերէն բիրաւորներ այրիացան:
Ըսէ՛, դաժան Դահին, անսի՛րս դու Կեղե՛հող.
Ո՞ր ազգերու աղջիկներուն կուսական ֆող՝
Այսօր ծրիկ ծրիկ բերին. Բո՛ւեա՛ն, խօսէ՛,
Ո՞ր աչերէն այսօր արիւն արցունք հոսէ՛...:
Միլիոններ՝ մէկին քմփին զոհ, մահանան,
Ջարդեն ազգի մ՛աշխարհականն ու ֆահանան,
Ու դեռ հիւաղ ոնիրներու Դահին վրայ՝
Բրոնակալը սոնք ու հանդարտ թող քրնանայ...:




Կը քրնանա՛յ, ու դուն օրօր կ'երգես անօր,
Որ ֆունին մէջ նիւթ ուրիշ ոնիրներ նօր,
Դուն, Երօպա՛, Ոսկի Հորթին երկրպագու.
Խո՛ւաններէդ, Լիվրբուլէ մինչեւ Պագու,
Բարձր գոռա՛, յաղթանակիդ փրչէ՛ փողը,
Թմբուկներով թաղէ՛ զոհերն ու կոյս հողը՝
Թարմ արիւնի հեղեղներով առաս առաս
Ոռոգուի թո՛ղ, զինովցրնէ Թուրքն ապրիւս:
Հարիւրաւոր հազարներու ոսկորներէն
— Անմեղներու, որ լրօնեցին, բայց կը ներե՛ն —
Մինչեւ ամպերը բարձրացո՛ւր նօր Աշարակ,
Տնկէ՛ մահիկն ալ գազաթին, կարմիր դրօշակ:



Իսկ դո՛ւ, երկի՛ր նահասա՛յ,
Անուրջներու նրպասա՛յ,
Հինգ դարերու սեւ — կարմիր
Վիճերովը խաչակիր.
Մաֆառէ՛ ֆիչ մ'ալ, հոգ չէ՛,
Մինչեւ որ ժամը հնչէ,
Ազատութեան ժամը սուրբ,
Երբ Թէյմրզ, Սեւ ու Դանուր,
Միսուրի, Նիլ ու Դանգէս
Դիտեն Դարձին մեծ հանդէս
Որդիներուդ սարագիր,
Դէպ հայրենի Սուրբ — Երկիր:

ՓԱՐԻԶԷ ԵԳԻՊՏՈՍ



Պ. Լևոն Ասատուրեան, թուաբան ուսուցիչը, որ քանի մը ասրի ապրած է Փարիզ եւ որ հիմայ քաղաքս կը գտնուի, խմբագրութեանս յանձնեց սոյն յօդուածը, զոր նոյնութեամբ կը հրատարակենք, Փարիզի հայ գաղութին վրայ գաղափար մը, եւ մանաւանդ, տեղւոյս գաղթականութեան բարեկարգման օրինակ մը տուած ըլլալու համար:

Աղեփասանորիս 7 Յունիս 1901

... Խմբագիր Տէր,

Ուրախութեամբ ողջունելով «Փիլոսոփի» վերերևուածը, կը փութամ զրկել ներկայ գրութիւնը. ինզրելով որ հաճիք զայն հրատարակել Ձեր... շաբաթաթերթին մէջ:

Կ. Պոլսոյ Օսմ. Իրամատան արիւնոտ տուամին վրայ՝ Փարիզ ապաստանած էի. տարիներով ապրեցայ քաղաքակրթութեան այդ կեդրոնին մէջ, աչքովս տեսայ քանի քանի հալածեալներ, — խաչագողները չը հաշուելով — որոնք խմբովին կը խուժէին հոն. սնունդ ու բնակարան պէտք էր այդ ճշմարիտ թշուառներուն: Բայց ո՞վ պիտի հասնէր անոնց, ո՞վ, եթէ ոչ, ժամանակներ առաջ հոն հաստատուելով՝ նախանձէլի դիրք բռնած կարգ մը պատուական հայրենակիցներ, որոնք իրենց սեփական աշխատութեան ու կորովին շնորհիւ, այսօր, օտարներուն յարգանքին և ազգակցաց հիացումին առարկան եղած են: Այդ ազնիւ ազգայինները, որչափ որ կրցած եմ սերտել, իրօք Արտասահմանի հայութեան փառքը կը կազմեն. և ես պարտք կ'զգամ մի առ մի ծանօթացնել զանոնք «Փիլոսոփի» ընթերցողաց:

Փարիզի հայ գաղութը կը բաղկանայ ազամանդի, գոհարի եւն, վա-

զէտներու, գիտուններու, ուսանողներու, և գործաւորներու համեստ թիւէ մը: Ուսանող ու գրագէտ դասակարգին վրայ չը պիտի խօսիմ, որովհետեւ այդ դասակարգը զինք բաւականէն աւելի ծանօթացուցած է, Փարիզ հրատարակչութեան միջոցաւ: Յաւով կը դիտէի, Փարիզի մէջ, մեր ամենէն ուշիմ ու դատող կարծուած երիտասարդութեան իրարու դէմ յարուցած անպէտ վէճերը, պառաւական տառուռները, փոզոցային հայհուհները, ամօթ իրենց... Ո՞րչափ կը փափագէի զիրենք տեսնել միշտ վեր՝ անձնական ցածութիւններէ և լայնամիտ:

Ազամանդի վաճառականաց մէջ առաջին տեղը կը բռնէ, եթէ ո՛չ գումարով, գոնէ խելքով, ազգեցութեամբ ու սրտով, Պ. Յակոբ Խսկէնճէր, որուն գտած յարգանքը Փարիզի բարձրագոյն ու պաշտօնական շրջանակներուն մէջ, մեր յեղին համար պատուաբեր ու դատին նպաստաւոր եղած է. հանրապետութեան նախագահէն սկսեալ բոլոր պետական անձնաւորութեանց կը ներկայանայ զարմանալի դիւրութեամբ ու համարձակութեամբ. առիթ մը չը փախցընէր, մեր դատին օգտակար ծառայութիւն մ'ընելու համար. վերջապէս, ազնիւ, անձնուէր, ու հանճարեղ Հայ մը:

Պ. Անթուան Պրիսո Սորիսցիս, մին է հոգիներէն որոնք առանձնութեան մէջ կը մեծնան. իր բարեկամները Տէրփիշ կը կոչեն զինք, և իրօք, խիկար մ'է, մէն մի բառը զոր կ'արտասանէ, խորհել կուտայ ժամերով. իր խօսքերը կ'ընդունուին պատգամի պէս, առածի կարգ անցած են. փորձառուի, փիլիսոփայի համբաւ կը վայելէ:

Պ. Միհրան Իւաչիսագճեան, վառվռուն, ժիր ու յանդուգն երիտասարդ մը, թունդ թրքատեաց, թէև Արևելեան լեզուաբանական վարժարանին մէջ սոյն լեզուին ուսուցիչ է. ինքնօգնութեան ոգի մ'ունի անխոնջ, իր իսկ


գործ, յետոյ թղթի գործարանատէր եղած է. ազգային գործերու մօտէն հմուտ, իր ազգակիցները կը սիրէ ու կը պաշտպանէ, ա՛յն աստիճան ոչ, իր գործարանին մէջ առանց պէտք ունենալու, հայ գրագիրներ ու պաշտօնեաներ կը գործածէ:

Պ. Միհրան Սվաճեան, յետին չքաւորութենէ բարձրացած այսօրուան դիրքին. եգիպտական հնութեանց մասնագէտ, ճարտիկ, գոշժուռեայ և առեւտուրի մէջ վտանգն արհամարհող Հայ մը:

Տիգրան Խան Քէրէկեան, հնութեանց մասնագէտ, Պարսից Շահէն դնահատուած իր բարի, հեղ ու մարդասէր նկարագրին և արժանիքին համար:

Շարունակելի

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ



Քանի մը ամիս հազիւ կայ որ Ազեքսանդրիոյ մէջ ազգային գործունէութիւն մը կը տիրէ. երկտասարդութիւնը նոր կորովի ու նոր եռանդի փորձեր ցոյց կուտայ: Կարճ ժամանակի մը մէջ յաջորդաբար կազմուեցան ընկերութիւններ եւ դեռ ուրիշներ ալ կազմուելու վրայ են: Այս ընկերութեանց վրայ կ'արժէ համառօտակի խօսիլ թուականի կարգով, և անոնց իւրաքանչիւրին նպատակն ու ընթացքը պարզել:

— Հայ Նուագածուաց Խումբ. — Այս աաշուան Ապրիլի վերջերը քանի մը վառվառու ու գոշժուռեայ երիտասարդներ, գեղեցիկ գաղափարը կը յղանան կազմելու 20-25 անդամներէ բաղկացեալ խումբ մը, հայկական ու արևմտեան կտորներ եղանակելու համար եւրոպական զանազան նուագարաններով: Առաջին քայլերնին յաջո-

ւրեան բերել ծրագիր մը, ներքին կանոնադրութիւն մը, ժողով ժողովի վրայ գումարելով գանձումներուն կը ձեռնարկեն ու այսօր իրենց նպատակին գործադրութեանը հետ են: Այս նուագազմ ընկերութիւնը կը կոչուի Հայ Նուագածուաց Խումբ, երկու կարգի անդամներ ունի. նուիրատու և նուագածու. մէն մի անգամ կը վճարէ 5 զրուչ ողջ շաբաթական. նուիրատու անդամներն ազատ են, երրորդ ուղեն հրատարիլ անդամակցութենէ և պիտի վերջստանան իրենց ըրած վճարումները: Խօսի, նուագածու անդամները կապուած են խումբին, որմէ եթէ զատուիլ ուղեն, պարտին իրենց վճարումներն ընկերութեան թողուլ. ասոնք են հակիրճօրէն ընկերակցութեան պայմանները: Սոյն ընկերութեան վարիչները, ձեռներէց ու յանդուգն, անմիջապէս վարձած են իտալացի հանրածանօթ ուսուցիչ մը, որ դիշերը կը դասախօսէ հայ աշակերտաց իր նուագարաններուն վրայ. տեսնելու արժանի է այդ աշխոյժ պատանիներուն չարժկոտութիւնն ու խանդը, որով առաջ կը մղեն իրենց աշխատանքը: Իրտեղի կէտ մը միայն:

Ընկերութեան վաշչական մարմնին կողմէն շատ մը հրաւիրագիրներ բաշխուած են տեղույս երկսեռ ազգայնաց, յորդորելով զանոնք յանգամակցութիւն, առանց խորհուելու թէ մեր օրիորդներն ու տիկիները չ'են կրնալ ներութիւն մ'ստեղծել, — հայ նուագածուաց երկսեռ խումբ մը կազմակերպելով. լաւագոյն չէ՞ր այդ հրաւիրագիրներով ա՛նն գեղարուեստասէր ու զգացման տէր ազգայնոց ներթական թէ բարոյական աջակցութիւնը խնդրել. այն ատեն, պիտի փութային — ու կ'արժէ արդէն — ա՛նն կերպով քաջալերելու ընկերութիւն մը, որ Ազեքսանդրիոյ մէջ հայութեան գոյութիւնն ու փառքը փայլեցնելու հանգամանքն ունի:

Արուեստասիրաց ընկերութիւնը յահակից անդամներէ բաղկացեալ, կը


նպատակն է դեղարուեստի սէրն ու ճաշակը աարածել. ժողովրդին բարքերն ազնուացնել, մտաւորական ուժերը ձուլել եզիպտահայ գաղութին մէջ, անկախ՝ ամեն ազգային կուսակցութիւններէ: Մէն մի անգամ կը վճարէ 10 զրուշ ողջ ամսական, 25 ամիս շարունակ, մինչև որ լրանայ 250 ուշնոց բաժինը: Պիտի ունենայ 400 բաժին, որոնցմէ 25 ամսուան մէջ պիտի կազմուի 1000 եղպ. ոսկիի գումար մը: Սակայն ամսական դանձումներէն զոյացած գրամը չը պիտի դատապարտուի անգործութեան, այլ, ապահովապէս շահարեք ձեռնարկներու համար պիտի գործածուի ընկ. ընդհ. ժողովոյ կողմէն ընտրուած Տնօրէն ժողովոյ ձեռքով: Հասոյթի ազբիւրներ ընդունուած են ամեն պարկեշտ ձեռնարկներ, ինչպէս, Թատերական ներկայացում, Թերթ, Դաշտահանդէս, և այլն, որոնցմէ անտարակոյս պիտի օգտուի ընկերութիւնը նութագէս և ժողովուրդը՝ բարոյապէս: Առ այժմ արձանագրուող ու վճարող բաժնետերաց թիւը կը հասնի 60 ի:

Յարատեութիւն ու յաջողութիւն կը մաղթենք թէ՛ Նուագածուաց խումբին և թէ՛ Արուեստասիրաց ընկերութեան, որոնք երկուքն ալ, կոչուած են օգտակար ծառայութիւններ մատուցանելու քաղաքիս հասարակութեան:


Նոր գիրք մը. — Ստացանք Դերասանապետ Պ. Թ. Ծառալեանի «Տայր Միշիկ Անդէնը» կատակախաղը, Պ. Գ. Սունդուկեանցի կովկասահայ մէկ գործին հեռուցութեամբ Պոլսահայ կեանքին վերածուած խիստ ծիծաղաշարժ կտոր մը, «Աշաք» Հայկ. Տպարանէն: Տայր Միշիկի վրայ բնաւ բան մը չ'ենք գրել, մեր ընթերցողներուն կը յանձնարարենք միայն որ ջանան ունենալ գոնէ մէկ օրինակ այդ գիրքէն, որ իր անսակին մէջ բոլորովին նոր ու էապէս հրահանդիչ է: Եւ ըսել թէ՛ այդ երկը պիտի ըլլայ նաև ապրուստի միջոց մը խեղճ դերասանապետին, որ սարինքէ

ի վեր կը տառապի, անուրբ հիւանդութենէ մը բռնուած:

Ապրեցնենք արուեստագէտներն ու միշտ բարձր պահենք դեղարուեստները:



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ



Քաղաքական աշխարհը սագնապի հրօքի մէջ է. հորիզոնին վրայ անպեր կը բարդուին հեզհեռ, արեւելեան ու հարաւային:

Հարաւ - Ափրիկեան պատերազմը կը արուակէ, ուղ ըլլան բրիտանական սքերիքի բլուրներն ու անգրգուելի արիութեան եւ ապեցուցիչ յամառութեան ապացոյցը տուող Պօկեները: Հասած լուրերը. երաշխարուքիւն մը չ'են բերեք պատերազմին մօտաւ Վախանին: Դեռ դիտի կարգանք հեռագիրները, Օրանժի, Թրանսվալի ու Քափի մէջ գործուած նսխիրներուն. արեւանք, ընդհարում, յարձակում, ջարդ, քալան. այս ամենը պիտի ըլլայ սակաւին. դարձեալ պիտի լսենք որ կը բանարկեն ընտանիքները, կ'այրեն ազարակները. եւ սակայն, կ'երեւի քե Սուսանի՝ համեմատաբար դիւրին դափնիներ չ'են որ պիտի պսակեն եւսրումի լորսին զըլուխը. լորս Ռուպերձ աւելի բաղաւոր կըրնայ համարուիլ, անոր համար որ ինք, յաջողութեանց ու փառքի զենիքը հասած, ապարեզը քոյուց Բիչների, որ, պէտք է խոստովանիլ, վարդեր աւելի փուշեր զսա իր ոտներուն տակ, հակառակ հանրային կարծիքն, գոր սեղծել յաջողած էր Սալգալլիի կառավարութիւնը, բնորութիւնները յաջողցնելու համար, վերջացած հռչակելով պատերազմ մը, որ մէկ ու կես տարի տեւելի յետոյ կը զտուի ճիշդ առաջին օրուան փութին մէջ...: Ըսել է քե Անգլիա դեռ շատ գործ պիտի ունենայ Պօկեներուն հետ:

Անցնինք Ափրիկէէն ծայրագոյն Արեւել. դեռ տարի մը չ'եղաւ որ ֆրանսոցները ջարդուեցան հոն, Պօսթրներէն. եւրոպան ու Ամերիկան, դառնակից ուժերնին քափեցին Ձիւնու վրայ, փեհին մտան, իրեցին մայրաքաղաքին, ու սկսան իրենց կարգին, փոխարինումի գործողութիւնները կատարել. — մեծ ու պզտիկ Մակսարեաներու — գոնե այսպէս հաւասարուցին — գլուխները կտուեցան, արուստներ ալ եղան ու աստիճանագուրկներ

բժխաններէն, որոնք Պօփրուկան տնային զխաւոր դերակատարներ եղած կը կարծուին. գլխասումներէն ու ախորներէն յետոյ կարգն եկաւ տուգանքին, բայց, անդին, գեղ 'ի վերերը, Մանչուրիոյ մէջ, ուրիշ խոնորում մը սկսած եր քրուիլ. Ռուսիա մէկ կողմէն, ինքզինք ընկած պատերազմի հոշակելով, շարք մ'առարկութիւններով՝ հանդէպ Չինաստանի բարեկամական դիրք մը բռնեց, Վաշինգթոնի կառավարութեան հետ, մինչեւ որ յաջողեցաւ, հաւուէն դուրս, մասնաւոր կարգադրութիւն մ'ընել Մանչուրիոյ մասին, որ գիտեմք: Տուգանքի խնդիրն ալ կարգադրուեցաւ կ'ըսեն. ուսի ալ բան մը չ'մնաց հոն ընելու. դաւանակից զօրերը պէտք է որ կամաց կամաց քաշուին երբան, որովհետեւ ծայրագոյն Արեւելին հարցը լուծուած է եղեր: Այս կասկածալից ըսելիք չ'կայ. բայց դեղին վրասնոյ միտ կայ ու կայ:

Վերջերս, Նիւ Եորք Հերալտի Բեքրուպուրկեան քրտակիցը հեռագրած է երկայն բարակ խօսակցութիւն մը. զոր ինք ունեցած է ռուս-չինական դրամասան նախագահ իշխան Ուլստոմսի հետ: Իշխանը, որ նոր վերագործաւ Չինէն, հիանալի կերպով գիտեց ծայրագոյն Արեւելի բաները. իրիս յոռեսեւ կարծիքներ յայտնած է եւ ինք այնպէս կը դասէ որ կացութիւնն աւելի պիտի ծանրանայ դաւանակից զօրերուն քաշուելէն ետք: Իշխանը նախ կը մեղադրէ Վիլհելմ Բ. ը, որ, չարաչար սխալեցաւ կ'ըսէ, երբ երեւակայեց քէ մէկ վազ կը բաւէր Փեկինը գրաւելու համար: Վաշտրգէ կոմսը, որուն շատ մեծ բաներ ընելու պէտքը յայտարարեց իր վեհապետը, հիմա շատ լաւ հասկցած է կեղծ կացութեան մը մէջ գտնուիլը:

Իսկ Չինացիք երբեք չը պիտի մոռնան, կ'ըսէ իշխանը, ու պիտի բնաւ չ'ներեն. անոնք սոսկում չ'ունենան. իրենց նախագործիքն հաւաստն այն աստիճան ուժով է որ վախի զգացումը չեն կրնար ունենալ. իրենց համար միեւնոյն բանն է, եթէ միլիոն մ'ալ զոհուի իրենցմէ: Յետոյ Ուլստոմսի իշխանը կը յարէ բառ առ բառ.

«Երբ սկսի անձեւներու եղանակը, դեսպանասանց պատերազմութիւնն ստանձնող

զուգորդը չ'պիտի կրնան հաղտը մնալ եւ պիտի ստիպուին բարձրերը դիմել. եւ այն ասեմ, շատ հաւանական է որ Չինացիք, աւելի քան երբեք կ'ստանան, յարձակին դեսպանասանց վրայ:

«... Այն ասեմ պիտի տեսնենք կրկնուիլը բոլոր անցած տարուան դեպքերուն. միեւնոյն խուճուկներն ու մեր ստիպական ապրկարութեան միեւնոյն զգացումները պիտի կրենք: Նոյն պատմութիւնը պիտի նորէն սկսի, ծայրագոյնը, նոր արեւանակով մը, վերջապէս, սակե՛ն բան...»

— «Իսկ Չինաստան մնացող զօրերը».

— «Բնակչութեամբ մեծ մասը պիտի մնան»:


Իշխան Ուլստոմսի կը կարծէ նաեւ քէ՛ Չին դիւստարութիւն չ'ունի տուգանք վճարելու:

Ընդհակառակը, Չինացիները կը պնդեն քէ՛ իրենց պէտք է տուգանք մը վճարուի, իրենց մայրաքաղաքին քալլումին փոխարէն:

Ծայրագոյն Արեւելի հարցն ալ ուրեմն հետի է լուծուած համարուելի:

Շարունակելի

ՎԵՐՉԻՆ ԼՈՒՐ



Չեյթունէն Մարաշ բերուած էին Եպիսկոպոսը, քահանաներ, ուսուցիչներ և ուրիշ մեծամեծներ, ծանր ամբաստանութեան մը տակ: Քանի մը շարաթ հսկողութեան տակ մնալէ յետոյ, տեղական կառավարութեան ազգային պաշտօնէից 600 ոսկի կաշառք մը տուով կը յաջողին վերագառնալ տեղերնին. միայն, քանի մ'ուսուցիչներ կը պահուին բանտը մինչև հիմայ: Մանրամասնութիւններ բուն իսկ տեղէն ստուգելէ յետոյ պիտի հրատարակենք յառաջիկային: